ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի հունվար ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 1536.5 մլն դրամ, որը պլանավորված 1500.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցել է 2.4 տոկոսով կամ ավել 36.5 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.2 %-ով կամ ավել է հավաքագրվել 116.9 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 81 տնտեսավարող սուբյեկտ, վերագրանցվել 1 և լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 4 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 9 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 3.9 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 54 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 26-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ական՝ գործունեության չծավալման և ելակետային տվյալների ու ուղղիչ գործակիցների ճշտության և 8 այլ ուսումնասիրություններ:

Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրումների գործունեություն իրականացնող անձանց հայտնաբերելու և հարկման դաշտ բերելու նպատակով ԼՂՀ էկոնոմիկայի նախարարության տրանսպորտային տեսչության հետ համատեղ ձեռնարկվել են լայնածավալ միջոցառումներ, այդ թվում՝ անհատական հանդիպումների տեսքով, որի արդյունքում հարկային մարմնում հաշվառման կամ գործունեության վերսկսման համար դիմել են ուղևորափոխադրումների գործունեություն իրականացնող շուրջ 80 տնտեսավարող սուբյեկտներ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 վարչական գործ՝ 305.0 հազ. դրամ գումարով, ավարտվել՝ 2 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 5.8 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 57 վարչական գործով սահմանվել է 885.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 7729 հաշվարկ-հաշվետվություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ընդունվել են 520 գրանցման հայտ և 3118 եկամտային հարկի հաշվարկ:

Հաշվետու ամսում ընդունվել է ԼՂՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին թվով 139 հայտարարագիր:

Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 52 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 45 վարձու աշխատողի՝ 6.7 մլն դրամի չափով:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել է հարկ վճարողների հավաստագրման կարգը, փոփոխություններ և լրացումներ կատարվել ավելացված արժեքի հարկի, առևտրի հարկի հաշվարկների, հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունների ձևերում:

Հաշվետու ամսում մշակվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը:

Ծրագրային նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել 2016 թվականին հարկային հաշվարկների էլեկտրոնային եղանակով ընդունումն ապահովելու նպատակով:

Հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 36 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր, իսկ 2 հարկ վճարողների արտոնությունների տրամադրումը մերժվել է՝ նույն վայրում, նույն գործունեությունը այլ տնտեսավարող սուբյեկտի անվամբ շարունակելու հիմքով, որոնց մասով կայացվել է փոխկապակցված ճանաչելու մասին որոշում:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնի պաշտոնական կայքէջում հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 18-ի N 15 հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն՝ հարկ վճարողներին տարեվերջին ընդունված օրենսդրական փոփոխություններին, հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային համակարգից օգտվելու ընթացակարգերին իրազեկելու նպատակով Ստեփանակերտ քաղաքում և շրջկենտրոններում հունվարի 25-ից մինչև 29-ը կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել մեկ հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 277, ելքագրվել՝ 119 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: